ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԷԼԻՆԱ ԳԵՂԱՄՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Էլինա Գեղամյան, Արդարադատության նախարարության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելառուսի Հանրապետություն (քաղաք Մինսկ) 2023 թվականի հունիսի 10-ից հունիսի 14-ը:

Հրավիրող կողմը՝ ԱՊՀ գործադիր կոմիտե:

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ «Դատական ակտերի հարկադիր կատարումն իրականացնելիս տեղեկատվության փոխանակման հարցերով համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի (այսուհետ՝ Համաձայնագիր) մշակման նպատակով ԱՊՀ երկրների արդարադատության նախարարների խորհրդում ձևավորված աշխատանքային խմբի նիստին մասնակցություն:

Քննարկված թեմաները՝ «Դատական ակտերի հարկադիր կատարումն իրականացնելիս տեղեկատվության փոխանակման հարցերով համագործակցության մասին» համաձայնագրի նախագիծ:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նիստի ժամանակ ներկայացվել և քննարկվել են Համաձայնագրի նախագծի կետերը, մասնավորապես՝ ԱՊՀ անդամ երկրներում հարուցված կատարողական վարույթի շրջանակում ԱՊՀ անդամ այլ երկրների իրավասու մարմիններին կատարողական վարույթով պարտապանի, նրա գույքի, պարտապանի մասնակցությամբ կատարողական վարույթների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հնարավորությունը, փոխանակման ենթակա տեղեկատվության շրջանակը, Համաձայնագրի շրջանակում անձնական տվյալների պաշտպանությանն ուղղված կարգավորումները, Համաձայնագրի շրջանակում հաղորդակցության լեզվի, հարցումների ձևանմուշների սահմանման անհրաժեշտությունը և այլ հարցեր:

Էլինա Գեղամյանի առաջարկով հունիսի 12-13-ը տեղի ունեցած երկօրյա նիստի ընթացքում Համաձայնագրի նախագծում կատարվել են Հայաստանի Հանրապետության համար սկզբունքային բազմաթիվ փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես,

1. Համաձայնագրի՝ Աշխատանքային խմբի նիստին քննարկվող տարբերակում նախատեսված էր Համաձայնագրի կողմի հարցման հիման վրա հարցում ստացող երկրում պարտապանի հաշիվներում, բանկերում առկա պահատուփերում և ավանդներում առկա դրամական միջոցների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վերաբերյալ դրույթ: Հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ բանկային գաղտնիքի պահպանման վերաբերյալ դրույթները և Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից ներկայումս ստացվող տեղեկատվության շրջանակը՝ Էլինա Գեղամյանը հանգամանորեն ներկայացրել է, որ ՀՀ իրավասու մարմինները համապատասխան հարցման վրա կարող են տրամադրել տեղեկատվություն միայն պարտապանի բանկային հաշիվներին բռնագանձման ենթակա կոնկրետ գումարի առկայության կամ առևտրային բանկերում պարտապանի անունով հաշվի առկայության վերաբերյալ տեղեկատվություն, իսկ բանկային հաշիվներում, ավանդներում առկա դրամական միջոցների ընդհանուր չափի վերաբերյալ տեղեկատվություն չի կարող տրամադրվել: Քննարկվող դրույթը խմբագրվել է Էլինա Գեղամյանի առաջարկած խմբագրությամբ:

2. Համաձայնագրի նախագծի քննարկվող տարբերակում նախատեսված էր պարտապանի գույքի վերաբերյալ փոխանակման ենթակա տեղեկատվության ոչ սպառիչ շրջանակ: Բացի այդ, փոխանակման ենթակա տեղեկատվության մեջ ներառված էին նաև պարտապանին պատկանող արժեթղթերի և օդային ու ջրային տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվությունը: Էլինա Գեղամյանն իր ելույթով ներկայացրել է, որ փոխանակման ենթակա տեղեկատվության ոչ սպառիչ շրջանակն իրավական որոշակիության և իրավունքի նորմի կանխատեսելիության, հարկադիր կատարողի լիազորությունների հստակ սահմանման անհրաժեշտության տեսանկյունից խիստ խնդրահարույց է, և Աշխատանքային խմբի անդամներին ներկայացրել է քննարկվող դրույթների՝ իր համար ընդունելի տարբերակը, որը հավանության է արժանացել խմբի անդամների կողմից և ընդգրկվել Համաձայնագրի նախագծի վերջնական տարբերակում:

3. Էլինա Գեղամյանը ներկայացրել է ՀՀ օրենսդրությամբ առկա իմպերատիվ պահանջները՝ կատարողական վարույթի շրջանակում կայացվող որոշումների վերաբերյալ պարտապանին ծանուցելու առնչությամբ, և նշել, որ այս համատեքստում Համաձայնագրի շրջանակում հարցումները գաղտնիության պայմանով կատարելու վերաբերյալ դրույթները կարող են խնդրահարույց լինել: Ներկայացված դիտարկման

հիման վրա նշված դրույթները խմբագրվել են և սահմանվել է հարցումը գաղտնիության պայմանով կատարելու անհնարինության դեպքում հարցում ստացած կողմի գործողությունների շրջանակը:

4. Էլինա Գեղամյանը ներկայացրել է պարտապանի մասնակցությամբ հարուցված կատարողական վարույթների վերաբերյալ փոխանակման ենթակա տեղեկատվության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համատեքստում ընդունելի շրջանակը՝ հստակ ընդգծելով այն, որ սկզբունքային մոտեցում է ներկայացված հարցումների կատարման համար հարկադիր կատարման մարմիններին չափազանց և ոչ արդարացված չծանրաբեռնելու հարցը: Էլինա Գեղամյանի առաջարկով փոխանակման ենթակա տեղեկատվության շրջանակը խմբագրվել է և նախատեսվել է միայն այնպիսի տեղեկատվություն, որն ուղղակիորեն անհրաժեշտ է հարցման կատարման համար, ինչպես նաև հանվել է կատարողական վարույթների շրջանակում իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ հարցումներ կատարելու հնարավորությունը:

5. Համաձայնագրի՝ Աշխատանքային խմբի հավանությանն արժանացած տարբերակում ընդգրկվել է Աշխատանքային խմբի այս և նախորդող երեք հանդիպումների ընթացքում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների կողմից գրավոր և բանավոր դիրքորոշումներով բարձրաձայնված առաջարկների և դիտողությունների ճնշող մեծամասնությունը, Համաձայնագրի նախագծում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ՝ Համաձայնագրի շրջանակում փոխանակման ենթակա տեղեկատվության շրջանակի, Համաձայնագրի շրջանակում ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության ձևերի և ուղղությունների առնչությամբ:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում որոշվել է ավարտել Աշխատանքային խմբի՝ Համաձայնագրի նախագծի մշակման ուղղությամբ աշխատանքը:

Արձանագրվել է, որ Համաձայնագրի նախագծի՝ Աշխատանքային խմբի կողմից մշակված և հաստատված տարբերակը կներկայացվի սույն թվականի սեպտեմբեր ամսին Տաշքենդում կայանալիք՝ ԱՊՀ երկրների արդարադատության նախարարների խորհրդի հաստատմանը:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Աշխատանքային խմբի հանդիպման ընթացքում որոշվել է խմբի անդամներին տալ լրացուցիչ սեղմ ժամկետ՝ Համաձայնագրի նախագծի վերջին տարբերակի վերաբերյալ լրացուցիչ դիտարկումներ ու առաջարկներ ներկայացնելու համար, ապա ամփոփել նախագիծը և հանձնել ԱՊՀ գործադիր կոմիտե՝ ԱՊՀ արդարադատության նախարարների խորհրդի հավանությանը ներկայացնելու համար:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ ի կատարումն ՀՀ վարչապետի աշխատակազմի թիվ 02/06.12/35136-2021 հանձնարարականի՝ վերը նշված գործուղման արդյունքների վերաբերյալ կազմակերպվել է աշխատանքային քննարկում Արդարադատության նախարարության իրավասու պաշտոնատար անձանց և ստորաբաժանումների համակարգողների մասնակցությամբ, և գործուղման ժամանակ ստացած տեղեկատվությունը փոխանցվել է վերջիններիս՝ իրենց համակարգման ներքո գտնվող ստորաբաժանումների աշխատակիցներին իրազեկելու համար:

Ստորագրությունը, ամսաթիվը.

Էլինա Գեղամյան

19.06.2023թ.